ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿԱՏԱՐԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՏԱՐԱԾՔԸ (ՀՀտարածքի 15.1%-ը)..... 4506 քառ.կմ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀբնակչ.4.7%).....137,4հազ. մարդ
որից՝ քաղաքային..... 93,2 հազար մարդ
գյուղական ..... 44.2 հազար մարդ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 30,5 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ 8
որից բացառապես գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներ.....3
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ 138
որից սահմանամերձ, լեռնային եւ բարձր լեռնային 108
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 472կմ
Իրանի Իսլամական Հանրապետության հետ ..... 42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ
(Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն) 110կմ
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ ..... ք. Կապան

Սյունիքի մարզը, 2016-2017թթ. խոշորացման գործընթացի արդյունքում, ընդգրկում է 8 համայնք, որից 5-ը ներառում է և քաղաքային, և գյուղական բնակավայր, 3-ը՝ միայն գյուղական:

Մարզում բազմաճյուղ տնտեսության կազմակերպման և զարգացման համար առկա են անհրաժեշտ նախապայմաններ:

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզպետարանի 2019թ. գործունեության համար հստակեցվել էին մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, դրանց լուծման համար մշակվել անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, դրանք ներառել մարզպետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության 133 կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների ավելի քան 57 տարածքային ծառայությունների աշխատանքը:

Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացումն ապահովելու նպատակով համայնքների կողմից 2019 թվականին ներկայացվել է 29 սուբվենցիայի ծրագրային հայտ՝ 3 միլիարդ 818 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր նախահաշվային արժողությամբ, որից դրական եզրակացություն է ստացել 25 սուբվենցիայի ծրագիր՝ ընդհանուր 2 միլիարդ 569 միլիոն պայմանագրային արժողությամբ, որից 1.09 միլիարդը՝ համայնքների համաներդրմամբ:

ՀՀ պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման չափը 2019թ. ընթացքում կազմել է՝ 964 միլիոն 557 հազար ՀՀ դրամ: ՀՀ պետական բյուջեից 2020 թվականին նախատեսվող վճարման չափը՝ 513 միլիոն 76 հազար ՀՀ դրամ:

Մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է եղել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն աջակցելը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսներ, չեն

պահանջում խոշոր ներդրումներ և աշխատատեղեր են ապահովում համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Շարունակվել է միջազգային կառույցների, բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների հետ ակտիվ համագործակցությունը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Սյունիքի մարզպետարանի համատեղ նախաձեռնությամբ 2019թ. մայիսի 27-ին Տաթեւ համայնքի «Տաթևեր» ճոպանուղու «Հալիձոր» կայանին հարակից տարածքում կայացավ «Իմ քայլը հանուն Սյունիքի մարզի» ներդրումային բիզնես-ծրագրերի համաժողովը:

Այն ուղղված էր ներդրումային միջավայրի ակտիվացմանը, բիզնես ոլորտում նորանոր փոխշահավետ գործակցային կապերի հաստատմանը:

Համաժողովի ընթացքում ներկայացվեցին Սյունիքի մարզի ներդրումային գրավչությունը և ներուժը՝ արդեն հաջողություն գրանցած և ընթացքի մեջ գտնվող բիզնեսի օրինակներ, իրատեսական ներդրումային ծրագրերի գաղափարներ (ընդհանուր՝ 25 ծրագիր): Ներդրողների և բիզնես-ծրագրեր ունեցողների միջև կնքվեցին համագործակցության 6 հուշագրեր: Համաժողովում կնքված հուշագրի արդյունքում Կապանում 2 նոր «Արմաթ» ինժեներական լաբորատորիա բացվեց:

2019թ. ընթացքում ուսումնասիրվել է մարզի համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 545 որոշում, որից՝ 467-ը՝ անհատական, 78-ը՝ նորմատիվ: Դրանց՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 62 եզրակացություն:

Աուդիտի է ենթարկվել մարզային ենթակայության կրթական ոլորտի 51 ՊՈԱԿ, առողջապահական ոլորտի 6 ՓԲԸ, 3 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ:

Սահմանված կարգով իրականացվել է քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատում, դասակարգում, պաշտոնի անձնագրերի կազմում և համապատասխան պաշտոններում վերանշանակում:

Տարվա ընթացքում կայացել է մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների տնօրենների 12 և առողջապահական կազմակերպությունների ղեկավարների 7 մրցույթ:

2019թ. ընդունվել է մարզպետի 131 որոշում, արձակվել 343 կարգադրություն. առաքվել է 8307 փաստաթուղթ, մարզպետարան մուտքագրվել՝ 12456 թղթակցություն:

2019թ. ընթացքում կատարվել է 377 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքում:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

2019 թվականին մարզի 3 համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ՝ համաձայն հաստատված աշխատանքային ծրագրի:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոններ համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը: Թափուր պաշտոնների համալրման նպատակով 2019 թվականի ընթացքում կայացել է 64 մրցույթ:

Մարզպետարանի կայքում հրապարակվել են համայնքների ավագանիների կողմից ընդունված և 2019 թվականի ընթացքում մարզպետարան առաքված որոշումները, համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, համայնքային ծառայության թափուր աշխատատեղերի համար մրցույթ անցկացնելու հայտարարությունները:

Մարզպետը, որպես մարզի զորահավաքային մարմնի և զորակոչային հանձնաժողովի նախագահ, իր իրավասության շրջանակներում օժանդակություն է ցույց տվել մարզի զինկոմիսարիատին՝ զորակոչերի նախապատրաստման և անցկացված ուսումնավարժանքների կազմակերպման ժամանակ:

Մարզային զորակոչային հանձնաժողովի կողմից 89 քաղաքացու վերաբերյալ եզրկացություն է տրվել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին:

Կատարվել են ամառային զորակոչի պլանային առաջադրանքները /106,5%/, իսկ ձմեռային զորակոչն ընթացքի մեջ է:

Տարվա ընթացքում անցկացվել են առանձնացված շտաբային 3 մարզումներ, որոնց վերաբերյալ հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ լրամշակվել են մարզի և 8 համայնքների քաղաքացիական պաշտպանության, բնակչության տարհանման և քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պլանները:

2019 թվականին մարզում գրանցվել է արտակարգ իրավիճակների 950 դեպք:

Մարզպետի համապատասխան որոշումներով 2019 թվականի ընթացքում անց են կացվել 1 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, 2 շտաբային վարժություն, 2 օբյեկտային վարժանք, 25 հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, 1 ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն, 30 բնակավայրերում՝ շտաբային ուսումնավարժություններ:

Մարզի տարածքում 2019 թվականին արձանագրվել է հանցագործության 910 դեպք, նախորդ տարվա 721-ի դիմաց, բացահայտումը կազմել է 69,8%, արձանագրվել են թմրանյութի ապօրինի շրջանառության 137դեպք (2018թ.-71 դեպք), որից 24-ը՝ իրացման նպատակով:

Արձանագրվել են զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 6 դեպք, բացահայտումը կազմել է 66,7%:

Սերտ համագործակցություն է հաստատվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀՊՆ և ՌԴՊՆ՝ մարզի տարածքում տեղակայված զորամասերի միջև:

Մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն ըստ բնագավառների

❖ **Ֆինանսական բնագավառ.** 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումը կազմել է 94.4%:

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, շտապ օգնության, ամբուլատոր-պոլիկլինիկական և նեղ մասնագիտական /հոգեբուժական/ դիսպանսերային ծրագրերով նախատեսված բազային ծավալը 2019թ. կազմել է 2.45 մլրդ դրամ, որն առողջապահության գործակալության կողմից ընդունվել և փոխհատուցվել է ամբողջությամբ::

ՀՀ պետական բյուջեով 2019թ. մարզի 8 համայնքներին նախատեսված 3.3 մլրդ դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները ընդհանուր եկամուտների մասով կատարվել են 95.6%, իսկ սեփա-կան եկամուտները ապառքներով՝ 106.3%: Բնակչության մեկ շնչի հաշվարկով համայնքների սեփական եկամուտները կազմում է 15.2 հազ.դրամ, իսկ աճը 2018 թվականի համեմատ՝ 14.5 %:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 2.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 7.2%, գույքահարկինը՝ 26.1%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 28%:

Կազմվել և գլխադասային մարմիններին են ներկայացվել 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2020թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար 2019թ. կազմակերպվել է 34 գնման ընթացակարգ, որոնց արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը հաշվառվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Ընդհանուր առմամբ խնայվել է 2.67 մլն. դրամ:

2019թ. պետական բյուջեով հաստատված մարզպետարանի պահպանման ծախսերի գումարից խնայվել է ավելի քան 38.1 մլն դրամ, որն ամբողջությամբ վերադարձվել է պետբյուջե:

❖ **Արդյունաբերություն.** Մարզի տնտեսության առանցքային ճյուղը արդյունաբերությունն է: Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում թողարկված արտադրանքի ծավալը 2019 թվականին, նախնական տվյալներով, ընթացիկ գներով կկազմի շուրջ 346.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ կաճի (համադրելի գներով) մոտ 15.0%-ով: Իրացվել է ավելի քան 333.0 մլրդ դրամի պատրաստի արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 0.5մլրդ դրամ, այլ երկրներում՝ 280.0 մլրդ դրամ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալում գերակշիռ մաս է կազմում հանքագործական արդյունաբերական արտադրանքը՝ նախնական տվյալներով (ընթացիկ գներով) մոտ 292.0 մլրդ. դրամ, կամ ընդհանուրի 84.4%-ը:

2019 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի մոտ 17.0%-ը բաժին է ընկել Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին:

2019 թվականին մարզում սպառված գազի ծավալը կազմել է շուրջ 59.09 մլն խոր. մետր կամ շուրջ 12,4 %-ով ավելի, քան նախորդ տարում: Բաժանորդ բնակիչների թիվը կազմել է 25789 (նախորդ տարվա համեմատ 1.3%-ով ավելի), իսկ կազմակերպություններինը՝ 492 (նախորդ տարվա համեմատ 4.6%-ով ավելի): Բնակչության կողմից սպառված գազի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 32.2%:

❖ **Քաղաքաշինություն.** 2019 թվականի ընթացքում մարզում իրականացվել են մոտ 5.2 մլրդ. դրամի համաշինարարական աշխատանքներ: Կատարված աշխատանքների ընդհանուր ծավալից 1,836 մլրդ. դրամը նպատակաուղղվել է կապիտալ շինարարությանը, 3.322 մլրդ. դրամը՝ հիմնանորոգմանն ու վերանորոգմանը:

Իրականացված աշխատանքների 19.6 %-ը կատարվել է պետական բյուջեի, իսկ 80.4 % ը՝ համայնքների բյուջեների և ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

Աշխատանքների ընդհանուր ծավալից 1.3%-ը ուղղվել է ջրամատակարարման համակարգերի, 2.6%-ը՝ ոռոգման ցանցերի, 3.2%-ը՝ դպրոցների, 2.9%-ը՝ նախադպրոցական, 0.6%-ը՝ մարզական հիմնարկների, 0.6%-ը՝ վարչական շենքերի, 16%-ը՝ բնակֆոնդի և 6%-ը՝ մշակութային օբյեկտների կառուցմանն ու հիմնանորոգմանը, իսկ 66.8%-ը՝ այլ ծրագրերի իրականացմանը:

Մարզում իրականացված քաղաքաշինական ծրագրերի ծավալներն ըստ ուղղվածությունների բնութագրվում են հետևյալ կերպ

1	Դպրոցական շենքերի հիմնանորոգում. կառուցում, վերանորոգում	198.5 մլն. դրամ
2	Մարզական հիմնարկների հիմնանորոգում	33.2 մլն. դրամ
3	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	310.2 մլն. դրամ
4	Նախադպրոցական օբյեկտների հիմնանորոգում	147.3 մլն. դրամ
5	Ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում	71.0 մլն. դրամ
6	Ոռոգման համակարգերի հիմնանորոգում	136.0 մլն.դրամ
7	Բնակարանային ֆոնդի վերանորոգում	824.2 մլն.դրամ
8	Վարչական օբյեկտների հիմնանորոգում	30.1 մլն դրամ
9	Այլ ենթակառուցվածքներ	3431.4 մլն.դրամ

Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	5.2 մլրդ դրամ

Համայնքների ղեկավարների կողմից 2019թ. տրվել է 262 շինարարության, 10 քանդման և 72 շինարարության շահագործման փաստագրման ակտ:

Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքում կառուցապատումների նպատակով իրականացվել է համայնքների ղեկավարների կողմից ներկայացված 30 հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցում համապատասխան մարմինների հետ, որից 10-ին տրվել է համաձայնություն, 3-ը մերժվել են, 14-ը հետ է ուղարկվել համայնք լրամշակման, իսկ 3-ը ընթացքի մեջ է:

Համակարգված աշխատանքներ են տարվել աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման ուղղությամբ: 2018 թվականին գույքագրված 54 աղբավայրերերից 2019թ. ընթացքում վերացվել են 15-ը, մնացել են34 աղբանոց և 5 աղբավայր: Տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի թիվը 2040-ից հասցվել է 2210-ի: Աղբահանության ինքնածախսածածկման ուղղությամբ կիրառված միջոցառումների շնորհիվ 2018 թվականի եկամուտ-ծախս հարաբերակցությունը 80 %-ի դիմաց 2019 թվականին կազմել է 94%:

Համապետական 2 շաբաթօրյակի կազմակերպումը և անցկացումը ներառել է մարզի բոլոր համայնքները և բնակավայրերը:

Սահմանված կարգով կատարվել են զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները: 2019թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բնակարանի գնման վկայագրեր են տրվել 9 ընտանիքի, 2 ընտանիք վերցվել են հաշվառման: Բազմաբնակարան վթարային 2 շենքերի բնակիչներին նյութական օժանդակություն ցուցաբերելու նպատակով կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, կազմակերպվել է նախագծերի հանրային քննարկում:

Տարվա ընթացքում նոր բնակավայրեր չեն գազիֆիկացվել, կազմվել են Մեղրի, Ագարակ քաղաքների և Լեհվազ գյուղի գազիֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերը: 2019թ. բաժանորդների թիվն ավելացել է 343-ով: Տարեսկզբի 25 446-ի դիմաց բաժանորդների թիվը տարեվերջին հասել է 25 789 կամ աճը կազմել է 1,3 %: Գազասպառող տնտեսվարողների թիվը 470-ից հասել է 492-ի, կամ աճը կազմել է 4,7%:

Մարզի էներգետիկ անվտանգությունն ապահովելու նպատակով ձեռնարկվել են միջոցառումներ 0,4կվ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման, էներգիայի հաշվիչների փոխարինման, ենթակայանների վերանորոգման կատարված աշխատանքների նկատմամբ հսկողություն սահմանելու ուղղությամբ:

❖ **Ճանապարհաշինություն.** ՀՀ պետական բյուջեով և տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2019 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից ընդհանուր առմամբ իրականացվել է ավելի քան 5.0 մլրդ դրամ գումարի աշխատանքներ, այդ թվում տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման համար՝ մոտ 4.1 մլրդ. դրամ, իսկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության համար մոտ 976.7 մլն դրամ:

Համաշխարհային բանկի միջոցներով 2019 թվականին իրականացվել են ա/ճ Մ-2 Վաղատին-Շենաթաղ կմ 0 + 000 - կմ 13 + 760 հատվածի վերականգնման համար 200.0 մլն.դրամի աշխատանքներ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին միջպետական, հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար կատարվել են 792.7 մլն.դրամի աշխատանքներ:

Ավարտվել են ա/ճ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման առանձին հատվածների (54.8կմ) միջին նորոգման, հիմնանորոգման՝ ավելի քան 3.8 մլրդ. դրամի աշխատանքները:

Մարզպետարանի պատվիրատվությամբ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին մարզում իրականացվել են 204.8 կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության և 150.7կմ երկարությամբ ընթացիկ պահպանման և շահագործման գծով մոտ 184.0 մլն. դրամի աշխատանքներ:

Ոչ պետական միջոցներով 2019 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել են շուրջ 34.8 մլն. դրամի աշխատանքներ:

❖ **Գյուղատնտեսություն և բնապահպանություն.** Մարզի 43.9 հազ.հա վարելահողերից 2019թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից ցանքատարածությունների տակ է դրվել 19.9 հազ.հա:

«Սերմարտադրողների միություն» ՍՊԸ-ի (ՍԱՄ) միջոցով սկսվել է հացահատիկային, կերային և հատիկաընդեղեն մշակաբույսերի սուպերէլիտային սերմերի արտադրության առաջին տարվա 1,5 հա տնկարանների հիմնումը: ՍԱՄ-ի կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին մատակարարվել են գարնանացան գարու՝ 300.0տ, ոլոռի՝ 5.0տ, ոսպի՝ 3.0տ, կորնգանի՝ 15տ, վարսակի՝ 26տ. սերմացուներ: Աշնանացանի համար տրվել է 300տ առաջին վերարտադրության սերմացու:

Տարվա ընթացքում «Մեղրիի տարածաշրջանի պտղաբուծության զարգացման» ՀԿ-ն «Բնապահպանության զարգացում» ծրագրի միջոցով իրականացվել է վաղահաս տնկիների (սալոր, կեռաս, թուզ) ներդրում (1120 շահառու): Հիմնվել է տնկարան՝ 7000 թզի, 25000 նռան: Կառուցվել և շահագործման է հանձնվել մրգի մթերման կետ, որը ՌԴ է արտահանել մոտ 25 տոննա թուզ, 3 տոննա թզի չիր, 11,5 տոննա արքայանարինջ:

Մարզի համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից մարզ են ներկրվել և հողօգտագործողներին տրվել 91.7 տոննա գարնանացան գարու, 0.646 տոննա առվույտի, 5.160 տոննա կորնգանի սերմացուներ:

2019թ. մարզի առավել վարակված 8400 հեկտար տարածության վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել շուրջ 1275տ ազոտական պարարտանյութ, անհատույց տրամադրվել է 672լ «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութ և բաշխվել է մարզի 6 համայնքների 53 բնակավայրերի հողօգտագործողներին:

Շարունակվել է ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված վարկերի տրամադրման, լիզինգային եղանակով գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ձեռքբերման գործընթացը: Ձեռք է բերվել 6 միավոր գյուղտեխնիկա, 2 ՈՒԱԶ ավտոմեքենա և 32 գյուղգործիքներ: 2019թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված է եղել մարզում առկա գյուղտեխնիկայի 85%-ը: Սուբվենցիոն ծրագրով Սիսիան համայնքի Արևիս, Թասիկ, Սալվարդ, Բռնակոթ բնակավայրերի համար ձեռք են բերվել 3 միավոր տրակտոր և 7 միավոր գյուղ գործիքներ:

Մարզի Կապանի և Սիսիանի տարածաշրջաններում 2 սպանդանոցների համար ձեռք են բերվել սառնարաններ, մորթի հոսքագծեր:

2019թ. մարզի 12 բնակավայրերի համար կատարվել են ագրոքիմիական քարտեզների մշակման աշխատանքներ:

Մաքրվել են ոռոգման ներքին ցանցերը, բոլոր հայտ ներկայացրած գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին տրվել է անհրաժեշտ չափի ոռոգման ջուր: 2019թ. մարզում ոռոգվող հողատարածքը կազմել է 1389.3 հա:

2019 թ. Վրաստանի Հանրապետությունից ձեռք են բերվել 150 տոհմային մեղվամայրեր:

Պետպատվերի շրջանակներում իրականացվող պատվաստուկների և հակահամաճարակային այլ միջոցառումների համար ձեռք են բերվել անհրաժեշտ պարագաներ և անասնաբուժական ծառայության հետ համատեղ վերահսկվել և համակարգվել են

գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները: 2019թ. մարզի չորս համայնքներում արդեն լուծվել է անասնաբույժների խնդիրը:

Տեղ բնակավայրում Ռազմավարական զարգացման գործակալության միջոցով, համայնքի համաներդրմամբ, բացվել են անասնաբուժական կետ, ոչխարների լողանոց:

Տարվա ընթացքում զանգվածային հիվանդություններ չեն արձանագրվել: Արձանագրվել է խոզերի աղիքային ինֆեկցիոն հիվանդություն, որոնք ենթարկվել են սանիտարական սպանդի:

Մարզում գործում է 13 տոհմային տնտեսություն՝ 1560 գլխաքանակով: Տարվա ընթացքում կատարվել է 2950 գլուխ խոշոր եղջերավոր անասունների (կովերի) արհեստական սերմնավորում:

Սահմանվել է առավել ուժեղացված հսկողություն մսամթերքների վաճառքի կետերում: Մսի վաճառքը թույլատրվում է միայն փորձաքննության արդյունքներից ելնելով: Այդ նպատակով մարզի բոլոր քաղաքներում բացվել են փորձաքննության լաբորատորիաներ: Աշխատանքներ են տարվում իսպառ վերացնելու մսի բակային, փողոցային վաճառքը:

Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, ապահովվել համագործակցություն բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Աշխատանքներ են տարվել համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում ապօրինի ծառահատումների, աղբակույտերի և արտադրական թափոնների տեղափոխման ուղղությամբ: Տեղական ծրագրեր են մշակվել նաև գյուղական բնակավայրերում ծառատնկումների կազմակերպման, փողոցների մաքրման ուղղությամբ:

Ապահովվել է նաև համագործակցությունը բնական պաշարների և ընդերքօգտագործման բնագավառում: Տասներեք կազմակերպություն ունի մարզում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզիա:

❖ **Հողօգտագործում.** 2019թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով մարզի մոտ 44.0 հազ.հա վարելահողերից օգտագործվել է 37.3 հազ. հա: Բարձրադիր գոտիներում գտնվելու, մեծ թեքություններ ունենալու և տնտեսապես ոչ շահավետ լինելու պատճառներով համայնքներում չի օգտագործվել մոտ 6.5 հազ.հա վարելահող, այդ թվում՝ 3.6 հազ. հա պետական և համայնքային սեփականության:

Մարզի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից (անկախ հողամասերի նպատակային նշանակությունից) 2019թ. հողօգտագործողների կողմից օգտագործվել է (վարձակալություն, կառուցապատման իրավունք, սերվիտուտ և այլն) մոտ 45.0 հազ. հեկտար՝ տարեկան շուրջ 600 մլն դրամ վճարով: 2019 թվականի հողօգտագործման վճարների (ներառյալ ապառքներ) գանձումները կազմել են 595.4 մլն. դրամ կամ 99.2%:

2019թ. մարզի 8 համայնքներում տարբեր նպատակային նշանակության հողամասերից աճուրդ-վաճառքի ձևով օտարվել է 52.0 հա հողամաս: Հողերի օտարումից տեղական բյուջեներ է մուտքագրվել ավելի քան 100.0 մլն. դրամ, որը օտարված հողամասերի կադաստրային արժեքների հանրագումարը գերազանցում է ավելի քան կրկնակի:

2019թ. ընթացքում համայնքներում փոփոխվել է 12 միավոր հողերի նպատակային նշանակությունը՝ ինչը խթան կհանդիսանա մարզում զբոսաշրջության, հասարակական սպասարկման և ենթակառուցվածքների զարգացման համար: Արդյունքում իրականացվել է մոտ 600.0 մլն. դրամի ներդրում, բացվել ավելի քան 100 հիմնական և ժամանակավոր աշխատատեղ:

2019թ. հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության արդյունքում՝ որպես կադաստրային արժեքների տարբերություն, համայնքների բյուջեներ են մուտքագրվել մոտ 5.0 մլն. դրամ:

❖ **Առողջապահություն և սոցիալական ապահովություն.** Ոլորտում մարզպետարանի գործունեությունն ուղղված է եղել ապահովելու գործող առողջապահական հաստատությունների համաչափ զարգացումը, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության, շտապ օգնության և բուժակամանկաբարձական կետերում ցուցաբերվող բուժօգնության բարձր որակն ու մատչելիությունը:

Բնակչության բժշկական բարեկեցության գնահատման համար կարևորագույն ցուցանիշներից է բնակչության բնական շարժի նկարագիրը, մասնավորապես՝ 2019 թվականին մարզում գրանցվել է 1336 ծնունդ, որից՝ 1233-ը մարզի բժշկական կենտրոններում, ծնելիությունը կազմել է 9,7 պրոմիլե և 1178 մահ՝ մահացության ցուցանիշը կազմել է 8,5 պրոմիլե: 2019 թվականին բնական աճը կազմել է 1,2 պրոմիլե: Մանկական մահացությունը կազմել է 3,0 (2018թ.՝ 5,5, 2017թ.՝ 6,7) պրոմիլե:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում աշխատում է 1254 մարդ, որից 229 բժիշկ, 649 միջին բուժաշխատող:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված էր 370 մահճակալ:

2019 թվականին մարզի բուժհաստատություններում ստացիոնար բուժօգնություն են ստացել 10520 հիվանդ, որից 1992 հիվանդ բուժվել է վճարովի հիմունքներով, իսկ 313-ը՝ համավճարի կիրառման սկզբունքով:

Մարզում 2019 թվականին մայրական մահացության դեպք չի արձանագրվել: 2019 թվականի ընթացքում մարզում գրանցված ծնունդների 92,3% (2018թ.՝ 91,9%) տեղի են ունեցել մարզի ծննդօգնություն իրականացնող 5 բժշկական կենտրոններում:

2019 թվականին առողջության առաջնային պահպանում իրականացնող հաստատություններ այցելությունների թիվը կազմել է460247 (2018թ.՝ 443149), մեկ բնակչի հաշվով հաճախումների թիվը կազմել է՝ 3,3 (2018թ.՝ 3,2):

2019 թվականին շտապօգնության ծառայությունն իրականացրել է 16864 (2018թ.՝ 15513) կանչ, որի արդյունքում հոսպիտալացվել է 2494 (14,8%) հիվանդ:

ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել և բաշխվել է կենտրոնացված գնումներով ձեռք բերված 85.2 մլն դրամի, իսկ մարդասիրական օգնության ճանապարհով՝ 14.1 մլն դրամի դեղորայք, բժշկական պարագաներ: 2019 թվականին մարզի բուժհաստատությունների կողմից հիվանդներին հատկացվել է 27,6 (2018թ.՝ 21.2,) մլն. դրամի անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայք:

2019 թվականին առողջապահական կազմակերպությունների պետական պատվերի գլոբալ բյուջեն կազմել է 2,45 մլրդ դրամ, կամ 2018 թվականի համեմատ աճը կազմել է 21 %. վճարովի ծառայություններից մուտքագրվել է 574,5 մլն. դրամ (աճը 11%):

«Արագ արձագանքման» ծառայության կողմից 2019 թվականին 3-րդ մակարդակի բուժհաստատություններ են ուղղաթիռով տեղափոխվել 25 հիվանդ, որի արդյունքում հնարավոր է դարձել փրկել 20 մարդու կյանք, համակարգի ԱԱՊ օղակի 354 աշխատողների աշխատավարձը բարձրացել է մոտ 33 %:

❖ Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ:

2019թ. ապրիլ ամսին Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում կատարված աուդիտորական ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվեց լուրջ խախտումներ աշխատակիցների կողմից: Փաստի առնչությամբ նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում գործակալության պետը և առաջատար մասնագետն ազատվել են աշխատանքից, մնացած չորս աշխատակիցներն ենթարկվել են խիստ կարգապահական տույժերի:

2019թ. դեկտեմբեր ամսին մարզի 60 սոցիալապես անապահով (նպաստառու) ընտանիքներ ընդգրկվել են «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման» ծրագրում:

2019թ. ՀՀ պետբյուջեով մարզում նախատեսված «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» 5 ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ՝ 3 Սիսիան, մեկական Կապան և Գորիս համայնքներում, որոնցում ընդգրկվել են 60 գործազուրկներ և աշխատանք փնտրողներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է երեք արտագնա ընդունելություն, Սիսիան, Մեղրի և Տաթև համայնքներում: Քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել

ընդունելության եկած 447 քաղաքացիների դիմումներին: Մարզպետարան դիմած 1153 քաղաքացիներից 811-ին տրվել է դրամական օգնություն՝ ընդամենը 27.515.000 դրամ գումարի չափով:

❖ **Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն.** Մարզում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներ հաշվառված չեն: Ոստիկանության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման է վերցվել 11 իրավախախտ, հաշվառումից հանվել է 8 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 150 երեխաների տրվել է վկայագիր:

Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 189 երեխաների տվյալներ մուտքագրվել է Նորք տեղեկատվավերլուծական կենտրոնի «Մանուկ» բազա:

Հայ օգնության ֆոնդի հովանավորչական ծրագրում ընդգրկված միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ 261 երեխաներ ստացել են ֆինանսական աջակցություն:

Վոլդ Վիժն միջազգային կազմակերպության հետ համագործակցության արդյունքում մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 196 երեխաներ իրենց ամառային հանգիստը անց են կացրել Հանքավանի «Զեփյուռ», իսկ ՀՕՖ հովանավորչական ծրագրում ընդգրկված 9-15 տարեկան 70 երեխաներ՝ Հանքավանի «Արագած» ճամբարում:

❖ **Կրթություն, մշակույթ, սպորտ.** Մարզում գործում է 117 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 16554 աշակերտներով, որից 6-ը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության, իսկ 111-ը՝ մարզային: 19 աշակերտ 2019 թվականին ստացել է տնային ուսուցում:

Մարզային ենթակայության 111 հանրակրթական ուսումնական հաստատություններում կոմպլեկտավորվել է 1037.75 դասարան՝ 15009 աշակերտով, որից 339-ը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

Մարզում հաշվառված նախադպրոցական տարիքի 5391 (նշված տարիքի երեխաների 74.8%) երեխա ընդգրկվել է մարզի համայնքային ենթակայության 44 և 2 գերատեսչական նախադպրոցական ուսումնական հաստատություններում, իսկ 128-ը՝ 17 այլընտրանքային նախակրթարաններում:

2018-2019 ուսումնական տարում միջնակարգ կրթության շրջանավարտների թիվը կազմել է 972 աշակերտ: ՀՀ բուհերում հայտագրվել է 581 դիմորդ, որոնցից ընդունվել է 494-ը կամ 85% (2018թ.՝ 70%):

2018-2019 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլին մասնակցել է 753 աշակերտ, որոնցից 123-ը՝ նաև հանրապետական փուլին: Հանրապետական փուլի մասնակից աշակերտները գրավել են 54 մրցանակային տեղ (2018-ին՝ 49):

Կապանի թիվ 2 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արեն Պետրոսյանը կենսաբանության միջազգային օլիմպիադայում արժանացել է բրոնզե մեդալի:

Մարզի դպրոցների 22 աշակերտ (2018թ.՝ 8) արժանացել է Գերազանցության մեդալի:

2019 թվականին շարունակվել է դպրոցական աբոնոմենտային համակարգի իրականացումը: Ապահովվել են «E-CULT» ծրագրով աշակերտների էլեկտրոնային գրանցումները՝ աբոնեմենտային ծառայություններից օգտվելու համար:

Մարզի բոլոր դպրոցներն ընդգրկված են Հայաստանի կրթական /ՀԴԻՑ/ և Dasaran.am միջդպրոցական ինտերակտիվ ցանցերում, ունեն իրենց պաշտոնական կայքերը, որտեղ սահմանված կարգով տեղադրվում են եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները: 26 դպրոցում գործում են ռոբոտաշինության լաբորատորիաներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին բաշխվել է 22 անուն 25607 կտոր անվճար և 53 անուն 30058 կտոր վճարովի, 8283 կտոր օժանդակ գրականություն:

Մարզից ՀՀ Կոտայքի մարզի «Լուսաբաց» ճամբար են մեկնել 180 աշակերտ՝ 3 հերթափոխով, մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաներ:

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում մարզի 53 դպրոցում տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է տաք, մնացածներում՝ չոր սնունդ: Պարենի

համաշխարահային ծրագրի օժանդակությամբ 2019 թվականին ամբողջովին վերանորոգվել է 49 դպրոցի ճաշարաններ, իսկ 15-ը՝ ընթացքի մեջ է:

Մարզի հանրակրթական դպրոցներում առկա ուսուցչի թափուր տեղերը համալրելու համար դպրոցներում պարբերաբար հայտարարվում են մրցույթներ, սակայն մասնագետ չլինելու պատճառով որոշ դպրոցներում թափուր աշխատատեղերը չեն համալրվել:

2019 թվականին մարզի համայնքներում նշվել են բոլոր պետական ու տաղավար տոները:

Մարզի երաժշտական, արվեստի դպրոցների, մարզադպրոցների ուսուցիչների և սաների հետ կազմակերպվել են համատեղ համերգներ, հանդիպումներ, փոխայցելություններ՝ փորձի փոխանակման և համագործակցության նպատակով:

2019 թվականին մարզպետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Սյունիքյան մշակութային շրջագայություն» ծրագիրը՝ փոխայցելությունների միջոցով համայնքների միջև մշակութային համագործակցության ամրապնդման նպատակով:

Մարզում գործող 10 մանկապատանեկան մարզադպրոցներում գործող 16 մարզաձևերի 158 խմբակներում ընդգրկված է 1894 երեխա:

Մարզը ներկայացնող թիմերը և մարզիկները հանրապետական մրցույթներին արժանացել են տարբեր մրցանակների և մեդալների:

Համահայկական 7-րդ ամառային խաղերում 10 սյունեցի մարզիկներ գրավել են մրցանակային տեղեր և արժանացել մեդալների:

❖ **Արտաքին կապեր.** Շարունակվել է արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

2019թ. ընթացքում ճանաչողական և աշխատանքային այցերով մարզ են ժամանել և մարզպետի հետ հանդիպումներ ունեցել ՀՀ-ում Լեհաստանի, Եվրոպական Միության, Իտալիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի դեսպանները, դիվանագիտական կորպուսի և տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են իրականացվող ծրագրերը և հետագա համագործակցության հետ կապված հարցերը:

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային համայնքների և նրանց հետ քույր քաղաքների համագործակցությունը և փոխադարձ այցելությունները:

❖ **Մարզպետի գործունեության լուսաբանում.** Մարզպետարանի գործունեությունը լուսաբանվել է մարզպետարանի պաշտոնական http:// syunik.mtad.am/ կայքում, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են տարածվել մարզային ու հանրապետական լրատվամիջոցներով, սոցկայքերով:

Կայքում տեղադրվել են նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերը, տեղեկատվական նյութերը, հայտարարությունները, Սյունիքի մարզպետի և առանձին ստորաբաժանումների տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, 2019 թվականին մարզպետի կողմից ընդունված որոշումներն ու կարգադրությունները, քաղաքացիների ընդունելության արդյունքները, դիմումների, բողոքների վերլուծությունները:

2019թ. մարզպետին ուղղվել է տեղեկատվություն ստանալու 93 գրավոր հարցում, որոնց սահմանված կարգով և ժամկետներում պատասխան է տրվել:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետը հարցազրույցներ է տվել տեղական և հանրապետական լրատվամիջոցներին: